ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔԸ 5

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐ

Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔԸ 5

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐ

Հանրակրթական ուսումնական հաստատությունների
հինգերորդ դասարանի սովորողների համար

Երևան-2024

ՀՏԴ
ԳՄԴ
«Իմ հայրենիքը 5» աշխատանքային գիրք-տետր, Գրիգորյան Հ. Ի., Պետրոսյան Ս. Ս.,
Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն - Եր.: Էդիթ Պրինտ, 2024 - 48 էջ:

Աշխատանքային գիրք-տետրը երաշխավորվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից 29.02.2024 թվականի 284-Ա/2 հրամանով որպես ուսումնական նյութ:

Աշխատանքային գիրք-տետրը հրատարակության է երաշխավորվել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի խորհրդի կողմից:

Մասնագիտական խմբագիր՝ մ.գ.թ., դոցենտ Սվաջյան Ա. Հ.

Գրախոսներ՝
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Հարությունյան Մ. Ռ.
Մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Հովյան Գ. Ռ.

Հեղինակներ՝
Գրիգորյան Հ. Ի., պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Պետրոսյան Ս. Ս.

Նկարիչ՝ Մնացականյան Կ. Բ.

Համակարգչային ձևավորում՝ Խուդավերդյան Դ. Գ., Դավթյան Հ. Լ.

Սույն աշխատանքային գիրք-տետրի նպատակը հանրակրթական ուսումնական հաստատությունների հինգերորդ դասարանի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներին «Իմ հայրենիքը» առարկայի ուսումնառության ընթացքում լրացուցիչ, առավել պարզեցված և հարմարեցված ուսումնական նյութերի տրամադրումն է:

ISBN
Տպաքանակը՝ 150 **օրինակ**

ՀՏԴ
ԳՄԴ

© Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, 2024

ՆԱԽԱԲԱՆ

«Իմ հայրենիքը 5» աշխատանքային գիրք-տետրի նպատակն է աջակցել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներին' յուրացնելու հինգերորդ դասարանի առարկայական դասընթացը: Այն մշակված է՝ հիմք ընդունելով «Իմ հայրենիքը» առարկայի չափորոշիչը, ծրագիրն ու ուսումնական նյութերը: Աշխատանքային գիրք-տետրը ներառում է առաջադրանքներ, որոնք նախատեսում են գործնական աշխատանքներ: Մեծ տեղ է հատկացված սովորողների ինքնուրույնության և ստեղծագործական ունակությունների, ինչպես նաև՝ գործնական աշխատանքների իրականացման խթանմանը:

«Իմ հայրենիքը 5» աշխատանքային գիրք-տետրը բաղկացած է առաջադրանքներից և հավելվածից:

Վերջինս ներառում է մկրատով աշխատելու և ինքնակպչուն պատկերներով առաջադրանքների կատարման համար նախատեսված բաժինը: Առաջադրանքներն այնպես են ձևակերպված, որոնք կուղղորդեն սովորողին ինքնուրույն ըմբռնել և կատարել տվյալ պահանջը: Միաժամանակ հարկ է նշել, որ, հաշվի առնելով սովորողների տարիքային և անհատական առանձնահատկությունները, առաջադրանքների բովանդակությունն ըստ անհրաժեշտության կարող է պարզաբանվել մանկավարժի, ուսուցչի օգնականի կամ ծնողի կողմից: Աշխատանքային գիրք-տետրին կից մշակված ուսուցչի ուղեցույցը կաջակցի մանկավարժին մեթոդական առումով առավել հստակ պատկերացնելու յուրաքանչյուր առաջադրանքի բովանդակությունը, քայլերի կատարման հաջորդականությունը, իր կողմից լրացուցիչ մշակվող նմանատիպ հարմարեցումների սկզբունքները, ինչպես նաև՝ կապը առարկայական ծրագրի, չափորոշչի հետ:

Ես ապրում եմ լեռնային երկրում

Քարտեզն իմ գործիքն է, որով ես ճանաչում եմ ինձ շրջապատող աշխարհը

Իմ հայրենիքը՝ Հայաստան, Հայկական լեռնաշխարհ:

Հայաստանը հարուստ է լեռներով, այդ իսկ պատճառով մեր պատմական հայրենիքը անվանում են ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀ

Առաջադրանք 1. **Գրի՛ր/անվանի՛ր պատասխանը:**

Իմ պետությունը _____ **է:**

Իմ մայրաքաղաքը _____ **է:**

Սա Հայաստանի Հանրապետության քարտեզն է, որտեղ նշված են մարզերը:

Առաջադրանք 2. **ա) Ներկի՛ր քարտեզը՝ ըստ օրինակի: Անվանի՛ր/ցո՛ւյց տուր մարզերը:**
բ) Կարմիր մատիտով եզրագծի՛ր քո մարզը:



Առաջադրանք 3. **ա) Նայի՛ր քարտեզին և ներքևում գրի՛ր/անվանի՛ր մարզկենտրոնները:**

Արագածոտն	_____	**Արարատ**	_____	**Արմավիր**	_____
Գեղարքունիք	_____	**Կոտայք**	_____	**Լոռի**	_____
Շիրակ	_____	**Սյունիք**	_____	**Վայոց Ձոր**	_____
Տավուշ	_____				

բ) Գրի՛ր/անվանի՛ր այն քաղաքը կամ գյուղը, որտեղ դու ապրում ես:

Իմ քաղաքը _____ **է:**

Իմ գյուղը _____ **է:**

Առաջադրանք 4. **Հավելվածից վերցրո՛ւ երկրի անվանումը և փակցրո՛ւ քարտեզի ճիշտ տեղում:**

(**Հավելված** 1)



Առաջադրանք 5. **ա) Քարտեզի վրա ցո՛ւյց տուր/անվանի՛ր այն վայրերը, որտեղ դու եղել ես կամ կցանկանաս լինել:**

բ) Ներքևում գրի՛ր վայրերի անվանումները: Ընկերոջդ պատմի՛ր քեզ ամենաշատը դուր եկած վայրի մասին:

1 _____

2 _____

3 _____

4 _____

5 _____

Իմ ընտանիքը

Առաջադրանք 6. **Տոհմածառի վրա գրի՛ր քո ընտանիքի անդամների անունները: Ներկի՛ր տոհմածառը:**



Առաջադրանք 7. **Քարտեզի վրա ցո՛ւյց տուր/ներկի՛ր Հայկական լեռնաշխարհի խոշոր լճերը և գետերը:**

Առաջադրանք 8. Ո՞ր ձկների տեսակներով է հայտնի Սևանա լիճը: Ճիշտ պատասխանները մատիտով միացրո՛ւ լճին:

Տառեխ

Իշխան

Սիգ

Սևանա լիճ

Զինանշաններ և դրոշներ

Սա Հայաստանի Հանրապետության զինանշանն է:

Առաջադրանք 9. **ա) Գրի՛ր/անվանի՛ր՝ ինչ կենդանիներ են պատկերված զինանշանի երկու կողմերում:**

1 _____ **2** _____

Հայաստանի պետական զինանշանի կենտրոնական մասում՝ վահանի վրա, պատկերված են հայկական չորս թագավորական տոհմերի զինանշանները:

բ) Օգտվելով հավելվածից՝ հավաքի՛ր Հայաստանի Հանրապետության զինանշանի մասերը:

(**Հավելված** 2)

գ) Գրի՛ր/անվանի՛ր ՀՀ զինանշանի կենտրոնում պատկերված լեռը։
Ներքևում ամբողջականացրո՛ւ Արարատ լեռը։

_____



Սա Հայաստանի Հանրապետության դրոշն է:

Առաջադրանք 10. **Ներկի՛ր Հայաստանի Հանրապետության դրոշը:**

Մշակույթ և կենցաղ

Յուրաքանչյուր ազգ ունի իր մշակույթը:

Մշակույթը ներառում է լեզուն, տոները, երգերը, պարերը, սովորույթները և այլն: Մեր լեզուն հայերենն է:

Առաջադրանք 11. **ա) Վերհիշի՛ր հայերենի այբուբենը: Անվանի՛ր տառերի մոտ դրված պատկերները:**



բ) Այբուբենի պատկերների անվանումներով կազմի՛ր նախադասություններ:

_____

_____

_____

_____

Աշխարհում տարբեր ազգեր ունեն տարբեր լեզուներ և մշակույթներ:
Դրանք բոլորը յուրահատուկ են:
Կարևոր է հարգել յուրաքանչյուր ազգի լեզուն և մշակույթը:

Առաջադրանք 12. **Գրի՛ր/ասա՛՝ ուրիշ ինչ լեզուներ դու գիտես:**

1 _____ 3 _____

2 _____ 4 _____

Մշակույթ
Ազգային տարազ

Յուրաքանչյուր ազգ և ժողովուրդ ունի իր մշակույթը:

Մշակույթը տարբերվում է նաև ազգային հագուստով, որը կոչվում է տարազ:

Տարազները լինում են տղամարդու և կանացի:

Հայաստանում տարբեր վայրերում մարդիկ կրում էին իրարից տարբերվող տարազներ (հագուստներ):

Հայկական տարազի մեջ գերակշռում են հողի, ջրի, օդի և կրակի գույները:

Դրանք արտահայտում են երկրի սևությունը, ջրի սպիտակությունը, օդի կարմիրը և կրակի դեղինը:

Հող

սև



Օդ



կարմիր



Ջուր



սպիտակ

Կրակ

դեղին

Առաջադրանք 13. **Ներկի՛ր տարազին բնորոշ չորս գույները, որոնք արտահայտված էին հայկական ավանդական հագուստի մեջ:**

Առաջադրանք 14**. Օգտվելով հավելվածից՝ վերցրո՛ւ համապատասխան տարազները, հագցրո՛ւ տղային և աղջկան**:

(**Հավելված** 3)





Ազգային հագուստից բացի գոյություն ունեն նաև ազգային կերակրատեսակներ: Յուրաքանչյուր տարածաշրջան ունի իրեն հատուկ կերակրատեսակները:

Հայկական աղաման

Աղամանի կարևորությունը հասկանալու համար պետք է ծանոթանալ աղին: Հայկական լեռնաշխարհը հարուստ է աղի հանքերով:

Աղի բյուրեղ

Առաջադրանք 15. **ա**) **Օգտվելով հավելվածից՝ ստացի՛ր աղաման**:

(**Հավելված** 4)

բ) **Փորձի՛ր պատրաստել աղաման կավից կամ ծեփամածիկից:**

Գրեթե բոլոր ազգերի մոտ աղը կարևոր նշանակություն ունի:

Հայկական ավանդույթի համաձայն շատ հարգելի հյուրերին հայերը դիմավորել են աղ ու հացով:

Առաջադրանք 16. **Օգտվելով հավելվածից՝ հավաքի՛ր հետևյալ կոլաժը՝ աղջիկն ու տղան աղ ու հացով դիմավորում են հյուրերին**:

(**Հավելված** 5)

Հայկական խոհանոց

Հայկական խոհանոցի հիմնական կերակրատեսակները տարբեր եղանակներով մսից պատրաստված ուտելիքներն են: Հայաստանի տարածքում վաղուց զարգացած է եղել անասնաբուծությունը: Մարդիկ պահել են կովեր, խոզեր, ոչխարներ և այլ ընտանի կենդանիներ՝ նրանցից միս և այլ բնամթերքներ ստանալու համար:

Հայկական սեղաններին միշտ եղել են տարբեր մսերից պատրաստված կերակրատեսակներ:

Հայկական լավաշ

Հայկական լեռնաշխարհում հացը թխել են դեռ հազարամյակներ առաջ: Մարդիկ ցանում էին ցորեն, հավաքած ցորենը աղում էին, ստանում ալյուր, այնուհետև թոնրի մեջ թխում լավաշ:

Ամենատարածված կերակուրը դա հայկական տոլման է:

Այն հիմնականում պատրաստում են ծեծած, մանր կտրատած կամ աղացած մսից, որին ավելացնում են ցորեն, ձավար կամ բրինձ և փաթաթում խաղողի կամ կաղամբի խաշած տերևներով:

Առաջադրանք 17**. Օգտվելով հավելվածի նկարներից՝ պատրաստի՛ր խաղողի թփով տոլմա**:

(**Հավելված** 6)

Հայկական ավանդական և հին կերակուրներից է հարիսան:

Հարիսան ավանդաբար մատուցվում է Զատկի օրը և համարվում է հայկական ազգային կերակուր:
Դա խիտ շիլա է, որը պատրաստվում է կորկոտից (չոր կամ տապակած ցորեն) և յուղոտ մսից (հավի կամ գառան յուղոտ մսից):
Հարիսան հայտնի է նրանով, որ 1915 թվականին Մուսա լեռան հերոսամարտի ընթացքում օգնել էր Մուսա լեռան հայերին (Թուրքիայում) դիմակայել քաղցին:

Առաջադրանք 18. Գրի՛ր/անվանի՛ր քո նախընտրած հայկական կերակուրը կամ կերակուրները:

1_____ 4_____

2_____ 5_____

3_____ 6_____

Մենք ունենք մեր սովորույթները

Սովորույթը մեր գործողություններն են, որոնք մենք անում ենք հաճախ կամ մշտապես:

Ինչպես բոլոր ժողովուրդները, հայ ժողովուրդը նույնպես ունի ավանդական ազգային տոներ:
Տոն է, երբ մենք նշում ենք մեզ համար կարևոր օրերը:
Մարդիկ, սովորաբար, ամեն տարի բարեկամների և հարազատների հետ տոնում են իրենց ծննդյան օրը:

Կան նաև պետական տոներ, օրինակ՝ Անկախության տոնը, Սահմանադրության տոնը, Հաղթանակի տոնը և այլն: Եկեղեցին նույնպես ունի իր տոները՝ Սուրբ Ծնունդ, Տեառնընդառաջ, Սուրբ Հարության տոն, Վարդավառ, Սուրբ Խաչի տոն և այլն:
Մեր օրերում Սուրբ Ծննդյան տոնի և Ամանորի խորհրդանիշն է տոնական զարդարված տոնածառը: Առաջին անգամ Սուրբ Ծննդյան տոնի տոնածառը զարդարվել է Գերմանիայում 16-րդ դարում:

Առաջադրանք 19. **Զարդարի՛ր տոնածառը գույնզգույն պատկերներով:**



Քրիստոնյաները հավատում էին, թե որոշ ծառեր ժամանակից շուտ ծաղկում են Սուրբ Ծննդյան տոնից առաջ: Դա ընդունվում էր որպես Հիսուսի ծննդյան հանդեպ հարգանք: Ըստ հայկական եկեղեցական տոնի՝ Սուրբ Ծննդյան հաջորդ օրը տեղի է ունենում Ջրօրհնեքը:

Ջրօրհնեքի արարողության ժամանակ ջրի մեջ իջեցվում է Սուրբ Խաչը, որը խորհրդանշում է Հորդանան գետում Հիսուս Քրիստոսի մկրտությունը:





Տեառնընդառաջ

Փետրվարին Հայաստանում նշում են Տրնդեզը կամ Տեառնընդառաջի տոնը, որը եկել է շատ հին ժամանակներից: Այդ օրը եկեղեցու բակում ընդունված է խարույկ վառել, որի վրայով պետք է ցատկեն նորապսակները՝ նոր ամուսնացած զույգերը:

Առաջադրանք 20**. Օգտվելով հավելվածի նկարներից՝ հավաքի՛ր Տեառնընդառաջի կոլաժը և պատմի՛ր ընկերոջդ տոնի մասին:**

(**Հավելված** 7)

Մեր ավանդական գեղեցիկ տոներից է Բուն Բարեկենդանը:

Բուն Բարեկենդանը նշվում է Սուրբ Սարգսի տոնից հետո: **Այդ օրը պատրաստում են ճոխ սեղան և ուրախ տոնում են**: **Մարդիկ պատրաստում են տիկնիկներ (Նուրիներ) և բեմադրում ներկայացումներ: Պատրաստում են նաև գաթա և հալվա:**

Առաջադրանք 21**. Ըստ օրինակի նկարի՛ր տիկնիկ:**



Հայկական մյուս գեղեցիկ գարնանային տոներից է Ծաղկազարդը:
Հիսուսի մուտքը Երուսաղեմ:

Այս տոնին մարդիկ եկեղեցի են այցելում՝ օրհնելու ուռենու ճյուղերը: Մարդիկ գլխներին դնում են այդ ճյուղերից հյուսված ծաղկեպսակներ:

Առաջադրանք 22**. Պատմի՛ր, թե ինչպես ես դու անցկացնում Ծաղկազարդի տոնը:**
Նկարի՛ր տոնի քեզ ամենաշատը դուր եկած մասը:

Սուրբ Հարության տոն
Զատիկ

Մյուս կարևոր և սիրված տոներից է Զատիկը կամ Հիսուս Քրիստոսի Հարության տոնը: Ճատ ժամանակ առաջ Հիսուսն ապրում էր և մարդկանց սովորեցնում սեր և բարություն: Ոմանց դուր չեկան նրա ասածները և նրան խաչեցին: Ըստ քրիստոնեական հավատքի, Հիսուսը վերակենդանացավ Զատկի կիրակի օրը: Ահա թե ինչու է Զատիկն այդքան գեղեցիկ նշվում. դա հույսի և նոր սկզբի խորհրդանիշ է: Զատկի տոնին կա շատ գեղեցիկ ավանդույթ. շաբաթ երեկոյան եկեղեցիներում կատարվում է ճրագալույցի պատարագ: Պատարագի վերջում մարդիկ եկեղեցում վառում են մոմերը և տանում իրենց տները: Զատկի տոնին ներկում են հավկիթներ:

Առաջադրանք 23. Ներկի՛ր ներքևում պատկերված հավկիթները քո նախընտրած գույներով և նախշերով:







Առաջադրանք 24**. Կարդա՛ ընկերոջդ հետ և պատասխանի՛ր հարցերին:**

Հայոց այբուբենն ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը:

Մաշտոցը լավ կրթություն էր ստացել և գիտեր հունարեն, պարսկերեն, ասորերեն և վրացերեն: Ինչպես գիտենք, Հայաստանն առաջինն էր ընդունել քրիստոնեությունը, սակայն ժողովուրդը չէր կարողանում կարդալ օտար լեզվով գրված Աստվածաշունչը, քանի որ չկային հայերեն տառեր: Գիր ունենալը շատ կարևոր էր հայ ժողովրդի համար, որպեսզի նա լիներ ինքնուրույն, միասնական: Մաշտոցը սկսեց այս դժվար ու կարևոր գործը և 405 **թվականին ստեղծեց հայոց գրերը (տառերը): Տառերի ստեղծումից հետո Մաշտոցն ու Սահակ Պարթևը թարգմանեցին Աստվածաշունը: Հայաստանում բացվեցին դպրոցներ, գրադարաններ:**

Մենք, հայերս, ունենք ևս մեկ շատ գեղեցիկ եկեղեցական տոն, որ կոչվում է Թարգմանչաց տոն: Այն սովորաբար նշվում է հոկտեմբեր ամսվա սկզբին: Այս տոնը նվիրված է Մեսրոպ Մաշտոցին, Սահակ Պարթևին և նրանց աշակերտներին, ովքեր թարգմանեցին Աստվածաշունչը:

Մաշտոցը մահացել է 440 թվականին: Նրա գերեզմանը գտնվում է Արագածոտնի մարզի Օշական գյուղում:

Ո՞վ է ստեղծել հայոց գրերը (տառերը): _____

Ո՞ր թվականին են ստեղծվել հայոց գրերը: _____

Որտե՞ղ է գտնվում Մեսրոպ Մաշտոցի գերեզմանը: _____

Առաջադրանք 25. **Նշի՛ր՝ ինչ եկեղեցական տոներ գիտես, և ամեն տոն ի՛նչ խորհրդանիշ ունի:**
Գրի՛ր դրանց անվանումները և տոնը խորհրդանշող բառը կամ բառերը:

1 _____ 4 _____

2 _____ 5 _____

3 _____ 6 _____

Առաջադրանք 26. **Ընկերոջդ հետ կարդա՛ ազգային փոքրամասնությունների մասին կարճ տեղեկատվությունը:**

Հայաստանի Հանրապետությունում ապրում են տարբեր ազգեր, որոնք կոչվում են ազգային փոքրամասնություններ: Նրանք մեզ հետ միասին զարգացնում են Հայաստանի մշակույթը, արվեստը, տնտեսությունը և այլ ոլորտներ: Հայաստանում ազգային փոքրամասնություններ են եզդիները, հույները, ասորիները, մոլոկանները:

Եզդիներ

Եզդիները բնակվում են Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Արմավիրի և Արարատի մարզերում:

Առաջադրանք 27**. Քարտեզի վրա գտի՛ր և ներկի՛ր այն մարզերը, որտեղ բնակվում են եզդիները:**

Հույներ

Հույներն ապրում են Լոռու մարզի տարբեր գյուղերում, ինչպես նաև՝ Շիրակի մարզկենտրոն Գյումրիում:

Առաջադրանք 28**. Քարտեզի վրա գտի՛ր և ներկի՛ր այն մարզերը, որտեղ բնակվում են հույները:**



Ասորիներ

Ասորիներն ապրում են Արարատի մարզի Վերին Դվին, Դիմիտրով և Կոտայքի մարզի Արզնի գյուղերում և Արմավիրի մարզի Նոր Արտագերս գյուղում:

Առաջադրանք 29. **Քարտեզի վրա գտի՛ր և ներկի՛ր այն մարզերը, որտեղ բնակվում են ասորիները**:



Մոլոկաններ

Մյուս ազգային փոքրամասնությունն են մոլոկանները, ովքեր քրիստոնյաներ են, սակայն չեն ընդունում խաչը: Հայաստանում մոլոկանները հիմնականում ապրում են Լոռու մարզում, մասնավորապես՝ Տաշիր քաղաքում, իսկ ավելի վաղ՝ Վորոնցովկա, Ֆիոլետովո գյուղերում, ինչպես նաև Գեղարքունիքի մարզի Ճամբարակ քաղաքում:

Առաջադրանք 30. **Քարտեզի վրա գտի՛ր և ներկի՛ր այն մարզերը, որտեղ բնակվում են մոլոկանները:**

Առաջադրանք 31. Ընկերոջդ հետ կարդա՛ պատմությունը, կազմե՛ք հարցեր և պատասխանե՛ք դրանց:

Քրիստոնեությունը կրոն է, որը հետևում է Հիսուս Քրիստոսի ուսմունքներին / հավատին: Քրիստոնյաները հավատում են, որ Հիսուսը Աստծո Որդին է, և որ նա եկել է երկիր՝ մարդկանց սովորեցնելու սիրել միմյանց, լինել բարի և ազնիվ: Քրիստոնյաները միշտ փորձում են Հիսուսի նման օգնել ուրիշներին, լինել բարի և սիրող:

Քրիստոնեությունը Հայաստան է մուտք գործել 1-ին դարում սուրբ Բարդուղեմիոս և Թադեոս առաքյալների միջոցով: Ինչպես գիտենք, կային մարդիկ, ում դուր չէին գալիս Հիսուսի գործերը, և նրան որոշեցին խաչի վրա բարձրացնել: Հիսուսին խաչելուց հետո հռոմեացի զինվորներից մեկը նիզակով հարվածեց խաչի վրա մահացած Հիսուսին:

Այդ նիզակը անվանում են Գեղարդ, և այն դարձել է քրիստոնյաների համար սուրբ իր/սրբազան մասունք: Հայ եկեղեցին ասում է, որ Գեղարդը 33 թվականին Հայաստան է բերել Թադեոս առաքյալը: Այն այժմ պահվում է Սուրբ Էջմիածնի թանգարանում:

Սուրբ Գեղարդ

Սուրբ Բարդուղիմեոս

Սուրբ Թադեոս

Առաջադրանք 32. **Կարդա՛/լսի՛ր Գրիգոր Լուսավորչի մասին պատմությունը:**
Ասա՝ ինչով է հայտնի Խոր Վիրապը:

Սուրբ Գրիգոր Լուսավորիչ

Հայաստանում քրիստոնեությունը հռչակվել է որպես պետական կրոն 301 **թվականին**: **Հայաստանում քրիստոնեությունը տարածել է Գրիգոր Լուսավորիչը: Նա հետագայում դարձավ հայ առաջին կաթողիկոսը**: **Հայ առաջին քրիստոնյա թագավորն էլ դարձավ Տրդատ** 3-**րդ Մեծը**: **Տրդատ** 3-**րդ թագավորը**, **երբ իմանում է**, **որ Գրիգորը քրիստոնեություն է ընդունել և հրաժարվում է պալատական ավանդույթներից**, **բանտարկում է նրան Արտաշատի բանտում** (**Խոր Վիրապում**): **Այնպես ստացվեց**, **որ Տրդատը դժվարությունների մեջ ընկավ և չկարողացավ թագավորել երկիրը: Այդ ժամանակ նա մի երազ տեսավ և հասկացավ**, **որ պիտի բանտից ազատի Գրիգորին: Թագավորի հրամանով Գրիգորին դուրս հանեցին խոր փոսից**, **որտեղ նա հրաշքով ապրել էր** 13 **տարի:**

65 **օր շարունակ Գրիգոր Լուսավորիչը բոլորին քարոզեց Քրիստոսի հավատը և բժշկեց Տրդատին**:

Առաջադրանք 33. ա) **Քարտեզի վրա ցու՛յց տուր, թե որտեղ է գտնվում Արտաշատ քաղաքը, այնուհետև Արտաշատի կողքը գտի՛ր և նշի՛ր Խոր Վիրապը:**

բ) Քարտեզի վրա փորձի՛ր գտնել նաև պատմական այլ հուշարձաններ և գրի՛ր/ասա՛ անվանումները:

1 _____
2 _____
3 _____
4 _____
5 _____

Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔԸ 5

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐ

Հանրակրթական ուսումնական հաստատությունների
հինգերորդ դասարանի սովորողների համար

Հավելված 1

ԻՐԱՆ

ՎՐԱՍՏԱՆ

ԹՈՒՐՔԻԱ

ԱԴՐԲԵՋԱՆ

Հավելված 2

Հավելված 3

Հավելված 4



Հավելված 5

Հավելված 6

Հավելված 7